Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
Ռեկտոր,
Ն.Խ. Սարիբեկյան

«15» 12 2019 թ.

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2019

№	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	էջ
1.	Առաջաբան	3
2.	Վարչական կազմ, ամբիոնի վարիչներ	5
3.	Ընդունելություն 2018	6
4.	Գիտական խորհրդի կազմը	7
5.	Գիտական խորհրդի գործունեությունը	8
6.	Գիտական մաս	9
7.	Ֆակուլտետների գործունեություն	12
8.	Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին	16
9.	Ուսումնական մաս	17
10.	Որակի ապահովման բաժին	24
11.	Արտաքին կապերի բաժին	27
12.	Ուսումնամեթոդական հանձնաժողով	33
13.	Գիտաբժշկական ուումնական կենտրոն	34
14.	Գրադարան	36
15.	Տնտեսական մաս	37

1. Առաջաբան

Ավանդական բժշկության համալսարանի ղեկավարությունը հաշվետու ժամանակաշրջանում առաջնորդվել է համալսարանի կանոնադրությամբ և ռազմավարական ծրագրով՝ շարունակելով բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտի ազգային և միջազգային աշխատաշուկայի համար բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության կադրերի պատրաստման գործընթացում արձանագրել որակական նոր մակարդակ, ուշադրության կենտրոնում պահելով գիտակրթական հիմնարար հարցերին միտված աշխատանքները:

Համալսարանի կրթական ավանդույթների պահպանմանը զուգահեռ իրականացվել են հաջորդական ու համակարգված քայլեր՝ համընթաց զարգացնելով բժշկական կրթության նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը: Անընդհատ զարգացման, առաջընթացի, և ժամանակին համահունչ գործունեության արդյունքում բուհը պատվով է հաղթահարել հավատարմագրման գործընթացի երկրորդ փուլը, որի համատեքստում առանձնակի կարևորվել է բժշկական կրթության բարեփոխումը, համապատասխանեցնելով եվրոպական բարձրագույն մասնագիտական կրթական տարածքի չափանիշներին:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անխափան գործունեության համար արդիականացվում են տեխնիկական միջոցները, լսարանները և լաբորատոր կաբինենտները, որի կատարելագործման ուղղությամբ հետևողական աշխատանքը խթանում է դասախոսների մասնագիտական որակի անընդհատ բարձրացման մրցակցությունը:

Համալսարանում ստեղծված համակարգչային լայն ցանցը և ինտերնետային կապի հասանելիությունը ուսման որակի բարձրացման երաշխիքներից է, իսկ ուսանող-դասախոս կապն ապահովող տարբեր էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով, որը շարունակաբար կատարելագործվում է, իրականացվում է կրթական նյութերի հասանելիությունը:

Տարվա ընթացքում հետևողականորեն համակարգվել է օտարազգի ուսումնառողների համար կրթական ծրագրերի յուրաքանչյուր դասընթացի էլեկտրոնային տիրույթում դասախոսների և ուսանողների խմբերի ինտերակտիվ գործունեությունը, իրականացվել է ինչպես առկա, այնպես էլ էլեկտրոնային

խորհրդատվության և էլեկտրոնային հանձնարարությունների տրամադրում և գնահատում, կախված առարկայական դասընթացների մասնագիտական առանձնահատկություններից:

Համալսարանը մեծապես ընդլայնել է միջազգային համագործակցության աշխարհագրությունը. գործակցային հուշագրերի, պայմանագրերի կնքումը շարունակական բնույթ է կրում:

Մեծ աշխատանք է տարվել ուսանողների կրեդիտային շարժունությունն ընդլայնելու ուղղությամբ:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

№	Անուն, Ազգանուն	Պաշտոն
1.	Սարիբեկյան Նորիկ	Ռեկտոր /ԿԳԹ
2.	Կարապետյան Անահիտ	Դեկան
3.	Նազլուխանյան Մարո	Գիտական մասի վարիչ/ԲԳԹ
4.	Սարգսյան Ասյա	Ուսումնական մասի վարիչ
5.	Հովսեփյան Մանուշակ	Որակի ապահովման բաժնի վարիչ
6.	Թորոսյան Աննա	Արտաքին կապերի բաժնի վարիչ
7.	Թարջումանյան Նվարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժ. վարիչ
8.	Ավոյան Սուսաննա	Գլխ. հաշվապահ
9.	Խեչումյան Սիմոն	Քաղ. պաշտպ. շտաբի պետ
10.	Մանաշյան Գոհար	Դեկանի օգնական
11.	Կիրակոսյան Գոհար	Ուսումնական մասի վարիչի օգնական
12.	Դանիելյան Նաիրա	Ուսումնական մասի վարիչի օգնական
13.	Սարգսյան Անի	Արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ
14.	Գաբրիելյան Վարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ
15.	Հարությունյան Լուսինե	Գանձապահ-հաշվապահ
16.	Ավետյան Աննա	Գրադարանավար

3. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉՆԵՐ

Ամբիոն	Անուն, Ազգանուն,Հայրանուն	Գիտական աստիճան, կոչում
Հումանիտար առարկաների	Կարապետյան Տաթևիկ	Բանաս. գիտ. թեկն.
Բնագիտական առարկաների	Ջավրուշյան Հայարփի	ԿԳԹ
Բժշկակենսաբանական առարկաների	Հունանյան Նաիրա	ԿԳԹ
Սոցիալական բժշկության	Սարգսյան Աննա	ԲԳԹ
Թերապևտիկ առարկաների	Նազլուխանյան Մարո	ԲԳԹ
Վիրաբուժական առարկաների	Մինասյան Արսեն	ԲԳԴ
Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	Մինասյան Էլեոնորա	ԲԳԹ
Ստոմատոլոգիայի	Կիրակոսյան Վահագն	ԲԳԴ, Պրոֆեսոր

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 2018

Համալսարանում իրականացվում է միայն առկա ուսուցում: 2018 թվականի ընդունելությունը անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով իրականացվել է համաձայն լիցենզիայի սահմանված տեղերի թվաքանակի, մասնավորապես.

- «Բուժական գործ» մասնագիտությամբ - 86 ուսանող
- «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ – 11 ուսանող:

Ըստ տարիների համեմատական պատկերը.



Ավանդական բժշկության համալսարանի անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով մասնագիտությունները.

Դասիչ	Ուսուցման ձևը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Որակավորում	Սահմանային տեղեր
091101.00.7	Առկա	6	Հայերեն և անգլերեն	բժիշկ	120
091201.00.7	Առկա	5	Հայերեն և անգլերեն	բժիշկ-ստոմատոլոգ	120

Հաշվետու տարվա ընթացքում ակնհայտ նկատվում է դիմորդների դինամիկական աճ, ինչը վկայում է, որ համալսարանը իրականացնում է արդյունավետ, նպատակային կառավարման քաղաքականություն և մատուցում է որակյալ բժշկական կրթական ծառայություն:

.

5. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝		կ.գ.թ., ռեկտոր Սարիբեկյան Ն.Խ.
Գիտական քարտուղար՝		բ.գ.թ., գիտական մասի վարիչ, «Թերապևտիկ առարկաների» ամբիոնի վարիչՆազլուխանյան Մ.Ա.
Գիտ.խորհրդի անդամներ՝		
Կարապետյան Ա.Ն.	-	դեկան
Սարգսյան Ա.Հ.	-	ուսումնական մասի վարիչ
Հովսեփյան Մ.Հ	-	Որակի ապահովման բաժնի վարիչ
Եսայան Ի.Մ.	-	Արտաքին կապերի բաժնի վարիչ
Կիրակոսյան Վ.Պ.	-	բ.գ.դ., պրոֆեսոր, «Ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ
Մինասյան Ա. Լ.	-	բ.գ.դ., «Վիրաբուժական առարկաների» ամբիոնի վարիչի ժ.պ., դասախոս
Կարապետյան Տ.Ս.	-	բանաս.գիտ.թ., «Հումանիտար առարկաների» ամբիոնի վարիչ
Ջավրուշյան Հ.Գ.	-	կ.գ.թ., «Բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչ
Հունանյան Ն.Գ.	-	կ.գ.թ., «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի վարիչ
Մինասյան Է. Մ.	-	բ.գ.թ., «Է. Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնի վարիչ
Սարգսյան Ա.Վ.	-	բ.գ.թ., «Սոցիալական բժշկության» ամբիոնի վարիչ
Վարդանյան Վ. Յ.	-	ԳԲՈՒԿ-ի գլխավոր բժիշկ
Թարջումանյան Ն.Վ.	-	ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ
Ավոյան Ս.Հ.	-	գլխավոր հաշվապահ
Չիլինգարյան Ա.Ս.	-	տնտեսական մասի վարիչ
Կուլիջանյան Հ.	-	ուսխորհրդի նախագահ, ստոմ. մագ. 1-ին կուրս
Լազարյան Թ.	-	բուժ. ֆակ. մագիստր. II կուրս ուսանող
Սարգսյան Ք.	-	ստոմ. ֆակ. մագիստր. II կուրսի ուսանողուհի

6. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի գիտական խորհուրդը համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական, գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող կոլեգիալ մարմին է:

Համալսարանի գիտական խորհուրդը 2018-2019 ուստարվա ընթացքում գումարել է 10 նիստ:

- Հաստատվել է գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա աշխատանքային պլանը:
- Քննարկվել է համալսարանի ինստիտուցիոնալ հավատագրման ինքնավերլուծությունը:
- Քննարկվել և հաստատվել են իրավանորմատիվային փաստաթղթեր:
- Քննարկվել են ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները:
- Լսվել են ԳԲՈՒԿ-ի տնօրենի հաշվետվությունները:
- Հաստատվել է համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի մասնագիտությունների ընդունելության քննությունները:
- Լսվել է հաղորդում համալսարանի ուսանողական խորհրդի գործունեության մասին:
- Գիտական խորհրդի նիստերում քննարկված հարցերի շուրջ կայացվել են որոշումներ:

7. ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

Համալսարանում հաշվետու տարում գիտաուսումնական գործընթացում ընդգրկված էին թվով 63 դասախոս, այդ թվում պրոֆեսոր՝ 1, գիտությունների դոկտոր՝ 5, դոցենտ՝ 8, գիտությունների թեկնածու՝ 27:



2018-2019 ուստարում մասնակցություն հանրապետական և միջազգային կոնֆերանսներին



2018-2019 ուստարում վերապատրաստումներ հանրապետությունում և արտերկրներում



2018-2019 ուստարում ՀՀ և արտասահմանում գրախոսվող ամսագրերում հրատարակված հոդվածներ



2018-2019 ուստարում լույս է տեսել ԱԲՀ-ի Է. Մինասյանի անվան ավանդական բժշկության ամբիոնի վարիչ բ.գ.թ. Է.Մ. Մինասյանի «Օրգանիզմի էներգոինֆորմացիոն համակարգի ախտորոշում» ուսումնական ձեռնարկը:

Դանիլով Ալբերտ բ.գ.թ. ավագ գիտաշխատող՝ 2018թ. դեկտեմբերի 28-ին «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ «Ռեֆերանս լաբորատոր կենտրոն» մասնաձյուղի տնօրեն՝ Ս. Կարապետյանի կողմից շնորհվել է շնորակալագիր, համաճարակաբանության ոլորտում ունեցած բազմամյա գիտագործնական գործունեության և հանրային առողջապահություն ոլորտում ներդրած ավանդի համար:

Ավդալբեկյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ՝ 2018թ. Լյարդի ուսումնասիրման Եվրոպական ասոցիացիայի անդամ: EASL The hqm qf hepatqlqgy:

Գրիգորյան Աննա ք.գ.թ.՝ 2018թ. Մխիթար Հերացի, Բիոքիմիկների ասոցիացիայի անդամ:

Շալջյան Արսեն՝ 2018թ. անդամակցություն /Դիմածնոտային և բերանի խոռոչի վիրաբույժների հայկական ասոցիացիա/:

Բազուկյան Ինգա կ.գ.թ. դոցենտ՝ 2018 Nqvember /ElSEVIER/ Karbala internatiqnal jqurnal qf Mqdern Sciencein in recqgnitiqn qf the cqntributiqns made tq the quality qf the jqurnal.

2018-2019 ուստարում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- 2018թ. հունիսի 12-ին ԱԲՀ-ն պայմանագիր է կնքել «Պոլոֆորմ Ինստիտուտ Ատի Ասոցիացիայի» /ք. Իտալիա/ հետ կրթական և գիտական հարաբերությունների զարգացման նպատակով:
- 2018թ. սեպտեմբերի 13-ին հերթական դասախոսությունը կարդաց Կալիֆորնիա նահանգի Սան-Ֆրանցիսկո համալսարանի բջջաբանության և հյուսվածաբանության ամբիոնի վարիչ, կենսաբան, բ.գ.դ., պրոֆեսոր Դայան Բարբերը: Դասախոսության թեման էր՝ «Բնային բջջիջների նշանակությունը բժշկական հետազոտությունների և վերականգնողական բժշկության բնագավառում, դրանց կարևորագույն դերը որոշ հիվանդությունների բուժման մեջ:
- 2018թ. դեկտեմբերի 14-ին տեղի է ունեցել ուսանողական սեմինար, որտեղ մասնակցեցին մի շարք ուսանողներ և ստացան մասնակցության սերտիֆիկատներ:
- 2019թ. մարտի 25-30-ը մի շարք ուսանողներ մասնակցեցին Հայաստանում կազմակերպված «FEBS Advanced lecture cqurse» կուրսերին և ստացան մասնակցության սերտիֆիկատներ:
- 2019թ. մարտի 11-22-ը անց է կացվել անգլերենի վերապատրաստման կուրսեր, որին մասնակցել են բուհի դասախոսական կազմը: Կուրսի ավարտին մասնակիցները ստացան սերտիֆիկատներ (B 2 մակարդակ) Բաբելոն ուսումնական կենտրոնի կողմից:

- 2019թ. ապրիլին տպագրվել է պրոֆ. Է. Մինասյանի «Օրգանիզմի էներգոինֆորմացիոն համակարգի ախտորոշում» խորագրով ուսումնական ձեռնարկը:
- 2019թ. մայիսի 19-ին գերմանացի մասնագետ պրոֆեսոր Ալաա էլ Դին Էլշարքավին հանդես եկավ «Ուղեղի կառուցվածքը և ֆունկցիան. Իրականության ստեղծում» թեմայով:
- 2019թ. մայիսի 14-ին տեղի ունեցավ ԱԲՀ-ի պրոֆ. Է. Մ. Մինասյանի «Օրգանիզմի էներգոինֆորմացիոն համակարգի ախտորոշում» ուսումնական ձեռնարկի շնորհանդեսը: ԱԲՀ-ի ռեկտոր կ.գ.թ. պրոֆ Սարիբեկյանի կողմից Է.Մ. Մինասյանին շնորհվեց շնորհակալագիր:
- 2019թ. մայիսի 15-ին անց է կացվել գիտաուսումնական սեմինար ԱԲՀ-ի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությամբ: Ավարտին բուժական ֆակուլտետի ուսանողները ստացան մասնակցության սերտիֆիկատներ:
- 2019թ. մայիսի 16-ին տեղի ունեցավ գիտաուսումնական սեմինար ԱԲՀ-ի ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությամբ: Ավարտին ուսանողները ստացան մասնակցության սերտիֆիկատներ:
- 2019թ. մայիսի 24-ին տեղի ունեցավ «Սիրում եմ քեզ հայոց լեզու» վերնագրով ուսանողական ցերեկույթ:

8. ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետները առաջնային են համարել հետևյալ ուղղություններով կազմակերպվող աշխատանքները համաձայն տարեկան աշխատանքային պլանի.

- Ուսումնական գործընթացի կատարելագործում,
- Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի և մագիստրոսի կրթական ծրագրերի պրակտիկայի բովանդակային բարեփոխումներ,
- Ուսանողական և ուսանողական գիտական ընկերության աշխատանքների կազմակերպում,

- Մասնագիտական իրազեկմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացում:

Վերը ներկայացված աշխատանքների իրագործման հետ կապված իրականացվել են.

- ուսումնական պլանների վերանայում և համապատասխանեցում ՈԱՇ-ի կողմից ներկայացված մասնագիտական կրթական չափորոշիչներին,
- ԱԲՀ-ի էլեկտրոնային հարթակի միջոցով իրականացվող ուսումնական աշխատանքների բարելավում, ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների զարգացում,
- ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական կարողությունների զարգացում, օտարալեզու դասախոսությունների, լսումների, սեմինարների կազմակերպում, զեկույցների ներկայացում,
- Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի ուսանողների պրակտիկայի կազմակերպման ընթացակարգի վերանայում և բարելավում,
- հանդիպում - քննարկումների կազմակերպում /պրակտիկայի ղեկավարների, պրակտիկայի համապատասխան հաստատությունների ղեկավարների և մասնագիտական կազմի ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ/,
- համալսարանում ֆակուլտետի դասախոսների և ուսանողների համատեղ ջանքերով մասնագիտական իրազեկման նպատակով բաց դռների կազմակերպում:

1. Համալսարանը որդեգրել է միջազգայնացման քաղաքականություն և այդ իմաստով նպատակ է դրել ընդլայնելու իր ուսանողների աշխարհագրությունը՝ ընդգրկելով ուսանողներ նաև այլ երկրներից:

   2017-2018 ուսումնական տարվա համեմատ, հաշվետու տարում ավելացել է համալսարանում սովորողների թվաքանակը, ինչպես նաև ընդլայնվել է համալսարանի ուսանողների աշխարհագրական շրջանակը. Հնդկաստանից, Իրաքից, Իրանից եկած ուսանողներից բացի համալսարանում սովորել են ուսանողներ նաև Եվրոպայի տարբեր երկրներից:

2. 2018-2019 ուսումնական տարվա տարեսկզբին բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների անընդհատ և ինտեգրացված, մագիստրոսի կրթական ծրագրերով սովորել են թվով 241, իսկ տարեվերջին՝ 227 ուսանող:

Աղյուսակ 1

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

Բուժական ֆակուլտետ				Ստոմատոլոգիական ֆակուլտետ				Ընդամենը		
Կուրս	Տարեսկզբին	Տարեվերջին	Շրջանավար	Կուրս	Տարեսկզբին	Տարեվերջին	Շրջանավար	Տարեսկզբին	Տարեվերջին	Շրջանավար
I	86	73	-	I	11	10	-	97	83	-
II	42	44	-	II	14	15	-	56	59	-
III	19	19	-	III	10	10	-	29	29	-
IV	8	8	-	IV	21	21	-	29	29	-
-	-	-	-	Մագ I	12	9	-	12	9	-
Մագ II	7	7	7	Մագ II	11	11	11	18	18	
Ընդամ.	162	151	7	Ընդ.	79	76	11	241	227	18
Հայազգի ուսանողներ								*47*	*44*	18
Օտարազգի ուսանողներ								*194*	*183*	-
Նախապատրաստական								4	4	

Նախորդ տարիների համեմատությամբ հաշվետու տարում արձանագրվել է ստոմատոլոգիական ֆակուլտետի առաջին կուրս ընդունված ուսանողների թվաքանակի նվազում:

3. 2018-19 ուսումնական տարվա ընթացքում բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում ուսանողների շարժն ունի հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 2

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺ
2018-19 ուս.տարի

Ֆակուլտետ	Հեռացում	Ազատում	Տարկետում	Տեղափոխում ստում. ֆակ.	Տեղափոխում բուժ. ֆակ.-ից	Վերականգ.	Ընդունում, այլ բուհից տեղափ.
Բուժական	7	13	1	3			7
Ստոմատոլոգիական	1	8			3	3	4
Ընդամենը	**8**	**21**	**1**	**3**	**3**	**3**	**11**

4. 2018-2019 ուսումնական տարում կազմվել, ժամանակին պատրաստվել են երկու ֆակուլտետների ուսումնական տարվա ուսումնական օրացույցները, աշնանային և գարնանային կիսամյակների դասացուցակները, միջանկյալ ստուգումների, քննաշրջանների, լուծարքների և պրակտիկաների ժամանակացույցները:

5. 2018-2019 ուսումնական տարում աշնանային և գարնանային կիսամյակների ընթացքում կայացել են համալսարանի ամբիոնների նիստեր, որտեղ քննարկվել և վերլուծվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը տվյալ ամբիոնում, ուսանողների առաջադիմության արդյունքները, լուծարքների, պրակտիկաների արդյունքները, վերհանվել են որոշ խնդիրներ՝ կապված գնահատման համակարգի ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների բարելավման և այլ հարցերի հետ:
6. Դեկանի և կուրսերի խորհրդատուների կողմից հաշվետու տարում բազմիցս կազմակերպվել են անհատական հանդիպում-զրույցներ ցածր առաջադիմություն ունեցող, բացակայող ուսանողների հետ, բացատրությունների միջոցով տարվել են համապատասխան աշխատանքներ, ամբիոններում կազմակերպվել են առարկայական խորհրդատվություններ:
7. Կիսամյակների ընթացքում բոլոր կուրսերում, համապատասխան կուրսի խորհրդատուի, ուսումնական մասի վարիչի, ուսանողական խորհրդի նախագահի հետ միասին անցկացվել են խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են ֆակուլտետների կուրսերի առաջադիմությունը, հաճախումների վիճակը, ինչպես նաև կազմակերպչական հարցեր:
8. Հաշվետու շրջանում պատշաճ կերպով կազմակերպվել են ձմեռային և ամառային քննաշրջանները, լուծարքները և վերահսկվել են դրանց ընթացքը:
   - Կազմվել են 2018-2019 ուսումնական տարվա ձմեռային և ամառային քննաշրջանների ժամանակացույցները՝ դրանք նախապես համաձայնեցնելով ուսանողների հետ:
   - 2018-2019 ուսումնական տարվա երկու քննաշրջանների ընթացքում կազմակերպվել են և անցկացվել 166 ստուգարք և 137 քննություն:

.

9. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 63 մարդ /որից 37-ը կին/,

Պրոֆեսոր - 1

Գիտությունների դոկտոր - 5

Դոցենտ - 8, որից 4-ը կին:

Գիտությունների թեկնածու- 25, որից 15-ը կին:

3 դասախոս համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:

Վարչական անձնակազմը - 16, որից 14-ը կին:

Ուսումնաօժանդակ կազմը - 9, որից 6-ը կին:

Գիտա-բժշկական ուսումնական կենտրոն-17, որից 13-ը կին:

Տնտեսական մասը-6, որից 3-ը կին:

2018-2019 ուստարվա ընթացքում կնքվել է 101 աշխատանքային պայմանագիր: Հիմք ընդունելով ռեկտորի 30.12.2016թ-ի թիվ 368 հրամանը /աշխատանքային պայմանագրերի ձևերը փոխելու մասին/, հիմնական աշխատակիցների աշխատանքային պայմանագրերից փոփոխվել է 23-ը:

- Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

  Անձնական դիմումի համաձայն ազատվել են 16-ը /պայմանագրի լուծարմամբ/, իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 55, որից 8-ը հիմնական աշխատող:
- 2018-2019 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է ռեկտորի հրաման:
- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N1450-Ն որոշման.
  - պրոֆեսորադասախոսական կազմ՝ 42 աշխատանքային օր:
  - ռեկտոր, դեկան, վարչական ստորաբաժանումների ղեկավարներ՝ 30 աշխատանքային օր:
- Հաստիքացուցակը կազմվել է 01.09.2018թ-ին, կատարվել է փոփոխություն և հաստատվել ռեկտորատի նիստում:
- Համալսարանում աշխատում են տարիքային 16 թոշակառուներ:

Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:

- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:

  Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:

  2018-2019 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 452-ը:

- Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:

  Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում:

  Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:

- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:

- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 209 տեղեկանք /աշխատողներին՝ 53, ուսանողներին՝ 156/, բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոց. ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:

10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

2018-19 ուս.տարում համալսարանի ուսումնական մասը իրականացրել է ուսումնակրթական գործընթացներ՝ համալսարանում գործող կրթական ծրագրերին ու պլաններին, պետական չափորոշիչներին համապատասխան:

- Ուսումնական տարվա ընթացքում համալսարանի հավատարմագրման գործընթացի հետ կապված պատրաստել ենք ուսումնական նյութեր և տրամադրել համապատասխան ստորաբաժանումներին:

- Տարեսկզբին ժամանակին պատրաստ են եղել ուսումնական գործընթացը պատշաճ իրականացնելու հետ կապված ուսանողների ցուցակները, ուսումնական գործընթացի հետ կապված փաստաթղթերը /մատյաններ, դասաբաշխման,

ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալի, օրացույցային-թեմատիկ պլանների, խորհրդատվություն-ների մատյանի և այլ ձևաթղթեր/: Ամբիոններն ապահովել ենք ուսումնական անհրաժեշտ փաստաթղթերով:

- 2018-2019 ուս.տարում կազմվել և ժամանակին պատրաստ են եղել երկու ֆակուլտետների և նախապատրաստական կուրսի ուսումնական տարվա ուսումնա-կան օրացույցները, միջանկյալ ստուգարքների, քննությունների, լուծարքների և պրակտիկաների ժամանակացույցները: Ուսումնական մասի կողմից կազմակերպվել են և վերահսկվել դրանց անցկացումը: Ժամանակին ապահովել ենք ստուգարքային և քննական տեղեկագրերը, որոնք 2018-19 ուս.տարում փոխվել են նորովին:
- 2018-19 ուստարվա աշնանային և գարնանային կիսամյակների համար կազմվել են անընդհատ և ինտեգիացված, բակալավրիատի և մագիստրատուրայի դասընթացների դասացուցակները: Ուստարվա ընթացքում անընդհատ վերահսկվել է դասընթացների իրականացումն ըստ դասացուցակի:
- 2018-2019 ուստարում ավելացել են վարձակալաց կլինիկական բազաները /Շենգավիթ ԲԿ, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ, Մայ Սիթի Դենտիստ ստոմ.կլինիկա/: Շենգավիթ ԲԿ, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում կահավորվել են համալսարանին հատկացված լսարանները, որոնք նաև համալրվել են համակարգիչներով և միացված են համակարգչային ցանցին:Բաշխվել է մասնաշենքի լսարանային ֆոնդը, կլինիկաներում ճշտվել է ուսանողներին հատկացված լսարանների հարցը: Եվ համալսարանում, և կլինիկական բազաներում ապահովել ենք լսարանային և կլինիկական գործնական պարապմունքները լիարժեք իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ:
- 2018-2019 ուստարում կազմակերպվել է բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով և մագիստրատուրայի դիմորդների ընդունելության գործընթացի նախա-պատրաստման և կազմակերպման միջոցառումներ:

  2018-2019 ուս.տարում դիմորդների հոսքը ավելացել է 2017-18 ուս.տարվա համեմատությամբ: Ընդունելությունն աճը կազմել է 36,6 տոկոս:

«Քիմիա»,«Կենսաբանություն» և «Անգլերեն» առարկաներից կազմակերպել և անցկացրել ենք դիմորդների գիտելիքների ստուգում: «Քիմիա», «Կենսաբանություն» և առարկաները անկացվել են բանավոր, իսկ «Անգլերենը» թեստով: Արդյունքում թվով

97 օտարերկրացի ուսանողներ ընդունվել են համալսարանի անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների առաջին կուրս:

- Կիսամյակների սկզբում ճշտվել են բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների բոլոր կուրսերի ուսանողների ցուցակները, կազմվել են ուսումնական խմբերը, ըստ որի ունեցել ենք 15 խումբ, որից 4-ը հայազգի և 11-ը օտարազգիների՝

Բուժական ֆակուլտետ

- ✓ I , II , III, IV կուրսեր՝ անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով - 7 խումբ:
- ✓ II կուրս՝ մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող - 1 խումբ :

Ստոմատոլոգիական ֆակուլտետ

- ✓ I, II, III, IV կուրսեր՝ անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով սովորողներ - 5 խումբ:
- ✓ I, II կուրսեր՝ մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող - 2 խումբ:

Հաշվետու ուսումնական տարում համալսարանում տարեսկզբին սովորել է 241 ուսանող, իսկ տարեվերջին՝ 227:

Ցածր առաջադիմության և վատ հաճախումների պատճառով համալսարանից հեռացվել են 8 ուսանող:

2018-19 ուսումնական տարում տարկետում են գնացել 1-ը, իսկ վերականգնվել՝ 3-ը:

2018-19 ուսումնական տարում համալսարանն ունեցել է 21 ուսանողի արտահոսք և տարբեր բուհերից ներհոսք՝ 11 ուսանողի:

- Համալսարանի ուսումնական մասը դեկանի, բոլոր ամբիոնների հետ ուսումնական տարվա ընթացքում անցկացվել են արտադրական խորհրդակցություններ, կոնսուլտացիաներ, հանդիպումներ, անհատական բացատրական աշխատանքներ:

1. Երկու կիսամյակների ընթացքում ուսանողները հանձնել են 166 ստուգարք և 137 քննություն:

   Տարվա կտրվածքով ամբիոնների ընդհանուր առաջադիմությունը կազմում է 91.4% , որը 24,8% աճել է 2017-2018 համեմատ: Ընդհանուր առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Սոցիալական բժշկության» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում:

Աղյուսակ 1

N	Ամբիոն	Աշնանային կիսամյակ		Գարնանային կիսամյակ		Տարեկան առաջ.	
		Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.
Հումանիտար առարկաների							
1	Բուժական ֆակուլտետ	99.4	78.8	93.2	60,3	96,3	69,5
2	Ստոմատոլոգ. ֆակուլտետ	98.2	75.3	86.9	48,2	92,55	61,7
Ընդամենը		***98.8***	***77.1***	***90***	***54,2***	***94.4***	***65,6***
Բնագիտական առարկաների							
1	Բուժական ֆակուլտետ	99.6	40.98	67.48	40,36	83.54	40,67
2	Ստոմատոլոգ.ֆակուլտետ	97.6	37.21	76.71	43,81	87.15	40,55
Ընդամենը		***98.6***	***39.1***	***72.09***	***42,1***	***85,34***	***40,6***
Բժշկակենսաբանական առարկաների							
1	Բուժական ֆակուլտետ	77	45.9	79,9	64	78.5	55
2	Ստոմատոլոգ.ֆակուլտետ	79,5	43,3	80,4	45.7	80	44.5
Ընդամենը		***78,3***	***44,6***	***80,2***	***54.9***	***79.3***	***49.8***
Սոցիալական բժշկության							
1	Բուժական ֆակուլտետ	98,7	33,6	97,9	73,5	98,3	53,6
2	Ստոմատոլոգ. ֆակուլտետ	100	41,1	100	44,3	100	42,7
Ընդամենը		***99,4***	***37.4***	***99***	***59***	***99,2***	***48,2***
Թերապևտիկ առարկաների							
1	Բուժական ֆակուլտետ	87.5	52.7	96,6	76	92,1	64,4
2	Ստոմատոլոգ. ֆակուլտետ	86.7	66	97,8	43,5	92.3	54,8
Ընդամենը		***87.1***	***59.4***	***97,2***	***59,8***	***92,2***	***59,6***
Վիրաբուժական առարկաների							
1	Բուժական ֆակուլտետ	100	65	100	91	100	78
2	Ստոմատոլոգ. ֆակուլտետ	93	40,5	87.2	51	90	45,8
Ընդամենը		***96.5***	***52,8***	***93.6***	***71***	***95,1***	***61,9***
Է. Մինասյանի անվան Ավանդական բժշկության							
1	Բուժական ֆակուլտետ	96.8	73.2	100	84.5	98.4	78.8
2	Ստոմատոլոգ.ֆակուլտետ	100	63.6	88.8	65.5	94.4	64.5
Ընդամենը		***98.4***	***68.4***	***94.4***	***75***	***96.4***	***71.7***
Ստոմատոլոգիայի							
1	Ստոմատոլոգ.ֆակուլտետ	84,23	36,2	93,7	54,26	89,4	45,2
Ընդամենը		***84,23***	***36,2***	***93,7***	***54,26***	***89,4***	***45,2***
ԸՆԴԱՄԵՆԸ		***92.66***	***51,9***	***90***	***58,8***	***91.3***	***55,4***

2. Կարգավորվել և վերահսկվել են համալսարանական ամբիոնների ուսումնական պարապմունքներն ու գործունեությունը:

- Ամեն ամիս ուսումնական մասը հսկում է ամբիոններում դասախոսների կողմից կատարված բեռնվածությունը: Ստացված տվյալները ամփոփվում են ամբիոնների տարեկան հաշվետվություններում:

.

- 2018-19 ուսումնական տարում բոլոր 8 ամբիոնների ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է 25 415 ժամ, դա 2609 ժամով ավել է 2017-18 ուս.տարվանից:

Կազմակերպել և ստուգել ենք 2018-19 ուստարվա համալսարանի 8 ամբիոնների տարեկան դասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածությունների հաշվարկները՝

Ուսումնական ծանրաբեռնվածությունների կատարողականի ցուցանիշները

Հ/հ	Ամբիոններ	Պլան	Կատարողական	Շեղում
1.	Հումանիտար առարկաների	3098	2846	-252
2.	Բնագիտական առարկաների	2551	2311	240
3.	Բժշկակենսաբանական առարկաների	4581	4135	-446
4.	Թերապևտիկ առարկաների	1950	1902	-48
5.	Վիրաբուժական առարկաների	1751	1709	-42
6.	Սոցիալական բժշկության	1370	1290	-80
7.	Ստոմատոլոգիայի	4440	4247	-193
8.	Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	1012	953	-59
Ընդամենը		**20753**	**19393**	**-1360**

2018-19 ուսումնական տարում 8 ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունը ըստ պլանի կազմել է **20753**, բայց կատարվել է **19393** ժամ: Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում չի կատարվել **1360** ժամ բեռնվածություն:

Պարզ երևում է նաև, որ առավել մեծ է եղել ուսումնական ծանրաբեռնվածությունը Ստոմատոլոգիայի (4440 ժամ) և Բժշկակենսաբանական առարկաների (4581 ժամ) ամբիոններում, իսկ փոքր՝ Է.Մինասյանի անվան Ավանդական բժշկության (1012 ժամ), ամբիոնում:

Ծանրաբեռնվածության ժամաքանակի թերակատարումը կարելի է բացատրել տարբեր պատճառներով. տոնական և ոչ աշխատանքային օրերի առկայությունը, խորհրդատվություններին հատկացված ոչ բոլոր ժամերի կատարումը, դասախոսների վերապատրաստման մեկնելու պատճառով:

- 2018-19 ուսումնական տարում կատարվել է ամբիոնների փոփոխություններ: Նախկին Կլինիկական առարկաների ամբիոնը լուծարվել է, կազմավորվել է Սոցիալական առարկաների ամբիոն: Կատարվել է նաև առարկաների

տեղափոխություն ամբիոնից ամբիոն: Որոշ ամբիոնների նոր ամբիոնի վարիչներ են նշանակվել:

- Ըստ ամբիոնների կատարել ենք պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության պլանավորում, հաշվառում :
- Հաշվետու շրջանում վերահսկել ենք համալսարանական ամբիոնների դասախոսների կողմից ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի կատարման ընթացքը:
- Վերահսկվել է դասախոսների աշխատանքային կարգապահությունը:
- Վերահսկել ենք ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան միջանկյալ ստուգումների, ստուգարքների և քննությունների անցկացման ընթացքը, ապահովել ենք դրանց համար անհրաժեշտ պայմաններ:
- Վերահսկել ենք ամբիոնների ուսումնամեթոդական աշխատանքների փաստաթղթերի և մատենավարության վարումը:

3. Հաշվետու տարում կազմակերպել ենք նախապատրաստական կուրսի դասընթացները հաստատված նոր ուսումնական պլանով, կատարել դասաբաշխում /ուսումնական աշխատանքների ծավալը կազմում է 870 ժամ և դասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածությունը 750 ժամ/: Կազմակերպել ենք նախապատրաստական կուրսի ավարտական քննությունները և դրական արդյունքների հիման վրա թվով 4 ուսանողների տրվել է վկայական:
4. Կազմակերպվել են ուսանողական տոմսերի, ստուգարքային գրքույկների, ոսումնական տարվա համար մատյանների, դիպլոմների հավելվածների և այլ նյութերի տպագրումը, 1-ին կուրսեցիներին և այլ կուրսեր ընդունվածներին ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի լրացումն ու հանձնումը:

➢ Դեկանի, կուրսղեկների, ուս. խորհրդի հետ միասին կազմակերպել ենք և անցկացրել խորհրդակցություններ բոլոր կուրսերում՝ կապված ուսումնական գործընթացների հետ: Կազմակերպվել են նաև խորհրդակցություն ավարտական կուրսերի ուսանողների հետ:

✓ Հաշվետու տարվա աշնանային և գարնանային կիսամյակներում մեր համալսարանում ուսումը շարունակելու նպատակով վերականգնվող /3/, այլ բուհերից տեղափոխված/11/, հեռացված /8/, ուսումը համաձայն դիմումի

ընդհատելու/21/ ուսանողների համար կազմակերպվել են փաստաթղթերի ձևակերպում, պայմանագրերի կազմում, առարկայական տարբերությունների հանձնման ժամանակացույցի կազմում, ժամանակին ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի հանձնում: Առարկայական տարբերությունների, դրանց ժամանակացույցի մասին ժամանակին տեղեկացվել են նաև համապատասխան ամբիոններն ու դասախոսները:

- Հաշվետու տարում կազմակերպչական բարձր մակարդակով են իրականացվել ամփոփիչ ավարտական ատեստավորումների քննությունները: Կատարել ենք ամփոփիչ ատեստավորումների նախապատրաստումը, պլանավորումն ու անցկացումը: Ամփոփիչ ատեստավորումներն ապահովվել են անհրաժեշտ փաստաթղթերով: Կազմնակերպվել են շրջանավարտների դիպլոմների և նրանց հավելվածների լրացման աշխատանքները և շրջանավարտների դիպլոմների բաշխման մատյանի վարումը: Հաշվետու տարում բուհն ավարտել են մագիստրոսի կրթական ծրագրով շուրջ 18 շրջանավարտ, որից

  - ✓ Բուժական ֆակուլտետ – 7 մագիստրոս,
  - ✓ Ստոմատոլոգիական ֆակուլտետ – 11 մագիստրոս:

Բացարձակ գերազանցությամբ բուհն ավարտել են 2 շրջանավարտ:

Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին:

2018-2019 ուս. տարում կազմակերպվել և պատշաճ կատարվել է պրակտիկայի անցկացումը բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում: Ամառային պրակտիկաները անցկացվել են ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում և ձեռքի հմտությունների մասնագիտացված սենյակում «Բուժքույրություն /բուժքրոջ օգնական/», «Վիրաբուժական ստոմատոլոգիա /բժիշկ-ստոմատոլոգի օգնական/», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա /բժիշկ-ստոմատոլոգի օգնական/» ստոմատոլոգիական ֆակուկտետի 2 և 4-րդ կուրսերում:

Մայ Սիթի Դենթիստ ստոմ. կլինիկայում պրակտիկան անցկացվել են «Վիրաբուժական ստոմատոլոգիա /բժիշկ-ստոմատոլոգի օգնական/», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա /բժիշկ-ստոմատոլոգի օգնական/», «Թերապևտիկ ստոմատոլոգիա /բժիշկ-ստոմատոլոգի օգնական/» ստոմատոլոգիական ֆակուկտետի 3 և 4-րդ կուրսերում: Բուժական ֆակուլտետի 2, 3, 4 կուրսերի պրակտիկաները անցկացվել են Սուրբ Գրիգոր

Լուսավորիչ ԲԿ-ում, Արթմեդ ԲՎԿ-ում «Բուժքույրություն /բուժքրոջ օգնական/», «Մանիպուլյացիոն բուժքույրություն /բուժքրոջ օգնական/», «Թերապիա/բժշկի օգնական/», «Վիրաբուժություն / բժշկի օգնական/»:

Որոշ օտարազգի ուսանողներ պրակտիկան անցկացնելու են Իրաքի, Հնդկաստանի կլինիկաներում: Պրակտիկայի արդյունքները սեպտեմբերին կամփոփվեն ամբիոններում:

- Կատարվել է մասնակցություն ամբիոնների նիստերում:
- Կատարվել են դասալսումներ «Բժշկակակենսաբանական առարկաների», «Թերապևտիկ առարկաների», «Վիրաբուժանական առարկաների» «Կլինիկական առարկաների» ամբիոններում:
- Հաշվետու տարում մասնակցել ենք ռեկտորատի, գիտ. խորհրդի նիստերին:
- ԱԲՀ- ում 2018-2019թթ ուստարում 11.03.2019թ. – 22.03.2019թ . կազմակերպվել է անգլերենի վերապատրաստման կուրսեր, որին մասնակցել են ամբիոնի դասախոսները և ստացել համապատասխան սերտիֆիկատներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համալսարանի ուսումնական մասը 2018-2019 ուս.տարում ապահովել է դասընթացների անխափան կազմակերպումը, համալսարանական ամբիոնների բնականոն գործունեությունը:
- Ուսանողների քանակի ավելացման պատճառով նպատակահարմար եմ գտնում ավելացնել կլինիկական բազաները, նաև վարձակալած բազաներում ավելացնել լսարանների քանակը:
- Համալրել համալսարանի գրադարանը անգլերեն գրականությամբ:

11. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

Որակի ապահովման բաժինն ընթացիկ ուսումնական տարում առաջնորդվել է բաժնի 2018-2019 ուստարվա աշխատանքային պլանով, որը կազմվել է ըստ 2017-2022թթ. Ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցի:

Պլանով նախատեսված աշխատանքների հիմնական մասը բաժնի վարիչը Որակի ապահովման հանձնաժողովի մշտական աջակցությամբ իրականացրել է, կան նաև պարբերաբար իրականացվող գործընթացներ, որոնք նույնպես եղել են ուշադրության կենտրոնում և իրականացվել են պատշաճ մակարդակով: ՈԱ բաժնի ամբողջ գործունեությունն ամրագրվել է արձանագրություններում:

2018-2019 ուստարում բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

1. **Ինստիտուցիոնալ հավատարմագրման հայտի նախապատրաստում և ներկայացում ՈԱԱԿ հիմնադրամ:** ԱԲՀ-ն գտնվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում: Համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցի շուրջ տարվող աշխատանքներն իրականացնում է աշխատանքային խումբը: 2017թ. հոկտեմբերից մինչև այսօր մեծ աշխատանքներ են տարվել այդ ուղղությամբ:
2. **Կազմակերպվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցի քննարկում ներքին շահակիցների շրջանում:**
3. **Իրականացվել է ուսանողների շրջանում ընթացիկ քարոզչական աշխատանքներ մշակված և վերամշակված կարգերի վերաբերյալ:** Տարվա ընթացքում դեկանի, խորհրդատուների հետ համատեղ ուսանողների իրազեկման նպատակով իրականացվել են քարոզչական աշխատանքներ (Ուսանողի ուղեցույց, Կրեդիտային համակարգի ուղեցույց, Ակադեմիական ազնվության կարգ, Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգի և այլնի) վերաբերյալ:
4. **Ամբիոններում կազմակերպվել են սեմինարներ որակի ներքին ապահովման հիմնահարցերի վերաբերյալ:** Տվյալ ուսումնական տարում Որակի ներքին ապահովման հիմնահարցերից առանձնացվել են Մասնագիտության կրթական ծրագրերի, Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի վերաբերյալ խնդիրները: ՄԿԾ-ի պատասխանատուի, դեկանի, ուսումնական մասի վարիչի, որակի ներքին ապահովման պատասխանատուի կողմից հանդիպումներ են կազմակերպվել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատակիցների հետ
5. **Կազմակերպվել և իրականացնվել են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ:** Ըստ հաստատված ժամանակացույցի՝ ՈԱԲ-ի և Ուսումնական մասի նախաձեռնությամբ իրականացվել են հարցաթերթիկային հարցումներ՝ Դասընթացի արդյունավետության որակական ցուցանիշների գնահատում, Ուսանողի կողմից

պրոֆեսորադասախոսական անձնակազմի գնահատում, ինչպես նաև 2018-2019 ուստարվանից գործող ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման նոր կարգի վերաբերյալ:

6. **ՈԱԱԿ-ի հետ համատեղ կազմակերպվել են որակի ներբուհական ապահովման աշխատանքներ:** Ընթացիկ ուսումնական տարում ԱԲՀ-ն մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված մի շարք հանդիպում-քննարկումների: Այսպես՝ փետրվարի 8-ին տեղի է ունեցել հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման վերաբերյալ հարցեր:

Ապրիլի 5-ին որակի ապահովման պատասխանատուների հետ «Ուսանողի գնահատում» թեմայով հանդիպմանը մասնակցել են ԱԲՀ-ի դեկան Ա.Կարապետյանը, Ուսումնական մասի վարիչ Ա.Սարգսյանը, ՄԿԾ-ի պատասխանատու Ա.Մինասյանը և բժշկակենսաբանական ամբիոնի դասախոս Հ. Ստեփանյանը:

Հունիսի 3-ին ԱԲՀ-ի ՄԿԾ-ի պատասխանատու Ա.Մինասյանը մասնակցել է «ՄԿԾ մշտադիտարկում և աուդիտ» թեմայով քննարկմանը, որտեղ Վանաձորի պետական համալսարանը ներկայացրել է իրենց ձեռքբերումները ՄԿԾ որակի ապահովման մեխանիզմների զարգացման ուղղությամբ:

Հունիսի 4-ին «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով աշխատաժողովին մասնակցել է Հումանիտար ամբիոնի դասախոս Տ.Կարապետյանը: Քննարկման առարկան արժանահավատ որակավորումների շնորհումն է և այդ համատեքստում ուսանողի հաջողության պլանավորումը, դասախոսի դերը արդյունավետ ուսուցման կազմակերպման գործում:

Հունիսի 25-26-ը ԱԲՀ-ի ռեկտոր Ն.Սարիբեկյանը, Վիրաբուժության ամբիոնի դասախոս Ա.Մինասյանը և ՈԱԲ վարիչ Մ.Հովսեփյանը մասնակցել են «Որակի ապահովման ներբուհական համակարգի հիմնախնդիրները և մարտահրավերները» խորագրով միջազգային աշխատաժողովին:

7. Ըստ ՈԱ բաժնի աշխատանքային պլանի՝ **Համալսարանի (2017-2022թթ.) գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների վերլուծություն** նախատեսված է հուլիսին, բայց քանի որ այն պատրաստվում է բոլոր ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունների հիման վրա՝

որպես Համալսարանի տարեկան հաշվետվություն, հետևաբար պատրաստ կլինի հոկտեմբերին: Այս հանգամանքը հաշվի կառնենք նոր ուստարվա աշխատանքային պլանը կազմելիս:

12. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Համալսարանի արտաքին կապերի բաժինը համալսարանի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք է, որն իր գործունեությունն իրականացնում է Արտաքին կապերի բաժնի կանոնակարգի հիման վրա:

Համալսարանի Արտաքին կապերի բաժնի աշխատանքներն իրականացնում են բաժնի վարիչը և բաժնի առաջատար մասնագետը՝ ռեկտորի և համալսարանի ստորաբաժանումների հետ համատեղ:

Բաժնի գործունեության հիմնական նպատակն է համալսարանի Ռազմավարական ծրագրում ամրագրված խնդիրների լուծումը, որը նպատակաուղղված է օտարերկրյա ուսանողների ներգրավման ու երկրների աշխարհագրության մեծացմանը, կրթական և գիտահետազոտական բնագավառներում համալսարանի միջազգային համագործակցության ընդլայնմանը, ինչպես նաև համալսարանի ինտեգրմանը միջազգային գիտական և կրթական գործընթացներին ու ծրագրերին և այլն:

1. ԱԲՀ ուսանողների ընդունելություն և հրամանգրում

1.1. Մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության փաստաթղթերի և չափորոշիչների նախապատրաստում:

1.2. ՀՀ ԿԳՆ կողմից սահմանված ժամկետներում կատարվել է դիմորդների անձնական դիմումների ու գործերի ուսումնասիրում և ներկայացում ՀՀ ԿԳՆ՝ փորձաքննության:

1.3. Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության հանձնաժողովի կազմի ընտրություն և հրամանգրում:

1.4. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարվել է ՀՀ ԿԳՆ համապատասխան հրահանգների հիման վրա ուսանողների հրամանագրում:

1.5.Հոկտեմբերին կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելություն համալսարանի նախապատրաստական կուրս՝ ՀՀ ԿԳՆ կողմից սահմանված ժամկետներում:

1.6. Հոկտեմբեր ամսվա վերջում կատարվել է համալսարանի օտարերկրյա ուսանողների ընդունելության արդյունքների հաստատում՝ Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ:

1.7. Կատարվել է 6 տեղափոխվող ուսանողների ընդունելություն.

Աշնանային կիսամյակ	***Գարնանային կիսամյակ***
Բուժական ֆակուլտետ՝ 3 ուսանող	Բուժական ֆակուլտետ՝ 4 ուսանող
Ստոմատոլոգիական ֆակուլտետո՝ 3 ուսանող	

2. Օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը

2.1.Արտաքին կապերի բաժինը, համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախպարարության, ինչպես նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարության կողմից մշակված կարգերի համաձայն իրականացնում է ուսանողների ներգրավում համալսարանի կրթական գործընթացին:

2.2.2018թ. ընդունելությունը ՀՀ ԲՈՒՀ ԿԳՆ կողմից բաց էր մինչև 28.09.2018թ, ուստի արտաքին կապերի բաժինը 2018-2019թ. ակադեմիական տարվա համար ուսանողների հավաքագրումը ավարտեց 28.09.2018թ.:

2.3.Ուսանողների հավաքագրումը կատարվել է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անատական դիմումների հիման վրա:

2.4.Արտաքին կապերի բաժինը արտահամալսարանական կառույցների հետ գտնվելով մշտական կապի մեջ (էլեկտրոնային, հեռախոսային և այլն)՝ նրանց պարբերաբար տեղեկացնրել է ընդունելության կարգի մեջ կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև նրանց ցուցաբերել է անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն ամբողջ տարվա աշխատանքի ընթացքում:

2.5.Դիմորդների դիմումները/ հայտերը ներկայացվել են համալսարանի պաշտոնական կամ Արտաքին կապերի բաժնի էլեկտրոնային հասցեներին: Բաժնի կողմից նախնական փուլում ճշտվել է դիմորդի քաղաքացիությունը/անձնագրային տվյալները և միջնակարգ/բարձրագույն կրթության վկայականի/այլ վկայականների առկայությունը, ներկայացվել են համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունները, առավելություններն ու հնարավորությունները:

2.6.01.03.2019 կնքվել է համագործակցության պայմանագիր Ժերայեր Արոյանի, Արա Ջոհրյանի և Ալի Մեֆլեհ Օտալլահ Ալ- Ագարմեհի հետ՝ Եգիպտոսից, Հորդանանից և Իրաքից ուսանողների ներգրավման գործընթացը կազմակերպելու համար:

2.7.Երկարաձգվել է «Քեմփըս Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ համագործակցության պայմանագրի գործունեության ժամկետը:

3. **Օտարերկրյա ուսանողների կացության քարտերի տրամադրման կազմակերպում:** Բաժինը համագործակցում է ՀՀ Անձնագրային և վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունքի հետ:

4.2018թ. Դեկտեմբերին կատարվել է 4 ուսանողի ընդունում ԱԲՀ նախապատաստական կուրս:

2018թ. Դեկտեմբերին ԱԲՀ գերմաներեն լեզվի դասընթացների մասնակցության համար ուսանողի հայտ:

5. **Օտարերկրյա ուսանողների անձնական գործեր:** Բաժնի միջոցով է կատարվում օտարերկրյա ուսանողներին վերաբերվող փաստաթղթաշրջանառությունը: Ամբողջ տարվա ընթացքում կատարվել է ուսանողների դիմումների ընդունում և փոխանցում համապատասխան ստորամաբաժանումներին, անձնական գործերի վարում, ձևակերպում, թարմացում, արխիվացում:

6. **Տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը:** 2017-2018 ուստարում ԱԲՀ-ի Ուսխորհրդի և համալսարանի ստորաբաժանումների հետ միասին բաժինն իրականացրել է.

6.1. Սեպտեմբերի 13-ին հերթական դասախոսությունը կարդաց Կալիֆորնիա նահանգի Սան-Ֆրանցիսկո համալսարանի բջջաբանության և հյուսվածաբանության ամբիոնի վարիչ, կենսաբան, բ.գ.դ., պրոֆեսոր Դայան Բարբերը:

6.2.Սեպտեմբերի 22-ին և 29-ին Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի կողմից կազմակերպվեց սպորտային միջոցառում նվիրված՝ ՀՀ անկախության տոնին և համալսարանական սպորտի միջազգային օրվան: Սպորտային մրցաշարն իր մեջ ներառում էր՝ կրոսավազք, պարանի ձգում և Հայաստանի սպորտի պատմության մեջ առաջին անգամ անցկացվող Դրագոն Բոութ (Dragon Boat) մրցումները: Ավանդական բժշկության համալսարանից մասնակցել են ՈՒԽ նախագահ Ս.Կարապետյանը, ՈՒԽ փոխնախագահ Ս.Կարախանյանը և Ա.Վարդանյանը: «Ոչ պետական բուհերի ուսանողական

կենտրոն» հասարակական կազմակերպությունը հանդես գալով միասնական թիմով զբաղեցրեց 2-րդ պատվավոր հորիզոնականը պարանի ձգում և Դրագոն Բոութ (Dragon Boat) մրցումներում:

6.3.25.09.2018 ԱԲՀ հյուրընկալեց Միջազգային թրեյներ Մանոջ Ջոնին, ով անցկացրել է բազմաթիվ թրեյնինգներ, դասընթացներ և բանակցություններ աշխարհի բազմաթիվ երկրներում:

6.4.20.10.2018 ԱԲՀ-ի ուսանողների շրջանում կազմակերպվեց «Մերձեցման երեկո»: Երեկույթին մասնակցում էին համալսարանի ղեկավարությունն ու աշխատակիցները, «Քամփս ինտերնեյշնլ» կենտրոնի և ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանատան ներկայացուցիչները, ինչպես նաև համալսարանի տարբեր ազգությունների ուսանողներ:

6.5.Հոկտեմբերի 31-ին և նոյեմբերի 1-ին համալսարանում անցկացվեց ներբուհական շախմատի մրցաշար: ԱԲՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և Երևանի Ավանի շախմատի մարզադպրոցի աջակցությամբ կազմակերված մրցաշարին մասնակցում էին համալսարանի հայ և օտարազգի մի շարք ուսանողներ:

6.6.2018 թ. դեկտեմբերի 14-ին և 21-ին ԱԲՀ Գիտական մասը կազմակերպել էր գիտաուսումնական սեմինար համալսարանի ուսանողների համար:

6.7.Մասնակցություն ՈԱԲ-ի կողմից կազմակերպած «Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության» զեկույցին, որը կայացավ 2019թ մարտի 4-ին, ներկա էր նաև Ուսխորհուրդը, որի ընթացքում ներկայացվեց Ինքնավերլուծության 10 չափանիշները:

6.8.2019 թ. Մարտի 10-ին «UBG International Recruitment in Eastern Europe and China» գերմանական ընկերության ներկայացուցիչները այցելեցին Ավանդական բժշկության համալսարան՝ ստեղծելու համագործակցության հիմքեր կրթության ոլորտում:

6.9.2019 թ. մարտի 18-ին և հունիսի 8-ին տեղին են ունեցել շաբաթօրյակներ, որոնց ակտիվ մասնակցություն են ունեցել համալսարանի բոլոր ուսանողները:

.

6.10.2019թ. Մարտի 19-ին գերմանացի մասնագետ պրոֆեսոր Ալաա էլ Դին Էլշարքավինը հանդես եկավ «Ուղեղի կառուցվածքը և ֆունկցիան, իրականության ստեղծում» թեմայով դասախոսությամբ:

6.11.2019թ. մարտի 25-30-ը մի շարք ուսանողներ մասնակցել են Հայաստանում կազմակերպած «FEBS Advanced lecture course» կուրսերին և ստացել մասնակցության սերտիֆիկատներ:

6.12.20.04.2019 Ուսանողները այցելեցին Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ, որտեղ ծանոթացան հայկական լեգենդար «Արարատ» կոնյակի պատմությանը, ականատես եղան կոնյակի արտադրման փուլերին, տեսան հնագույն հայկական տակառները, իմացան՝ ինչպիսին են եղել հայկական կոնյակները 100-120 տարի առաջ, ովքեր են խմել հայկական կոնյակ, ինչ մեդալներ են զարդարում ԱՐԱՐԱՏ լեգենդը, շրջեցին հնեցման արտադրամասում և տեսան, թե ինչպես են պահպանվում կոնյակները, հայտնի անձանց անվանական տակառները:

6.13.2019թ. ապրիլի 20-ին Սեղանի թենիսի մարզաձևի մրցումներին մասնակցել են բուժական ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողներ Մունտադհեր Սաֆաալդին Նասերը, Աբդուլլահ Հուսամ Ջամելը, Բհավեշ Կումար Սիշայեն, Մոհամմեդ Աբդուլսատտար Օթիման Ալ-Ջանաբին:

6.14.25.04.2019 ուսանողները՝ ավանդույթի համաձայն, այցելեցին Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին: Նրանք եղան նաև թանգարանում՝ որտեղ ծանոթացան Հայկական հարցի և Ցեղասխանության պատմությանը:

6.15.2019թ-ի մայիսի 6-ին մեկնարկեց Ֆուտզալի միջբուհական առաջնություն, մասնակցել են 14 բուհի մոտ 200 ուսանող, որոնց թվում և ԱԲՀ-ի ուսանողները՝ բուժական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողները ստոմատոլոգիական ֆակուլտետի 4-րդ կուրսի:

6.162019թ. մայիսի 14-ին ԱԲՀ-ում տեղի ունեցավ ԱԲՀ-ի «Է.Մ.Մինասյանի անվան Ավանդական բժշկության» ամբիոնի վարիչ բ.գ.թ., պրոֆեսոր Է.Մ.Մինասյանի «Օրգանիզմի էներգոինֆորմացիոն համակարգի ախտորոշում» ուսումնական ձեռնարկի շնորհանդեսը, ներկա էին նաև ԱԲՀ-ի ուսանողները:

6.17.Ուսանողների առաջարկով համալսարանի ուսխորհուրդը ս/թ մայիսի 15-ին կազմակերպեց Օրթոպեդիկ ստոմատոլոգիայից գործնական հմտությունների ցուցադրման բաց դաս համալսարանի ստոմատոլոգիական ֆակուլտետի բարձր կուրսերում, որը վարեց «Ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ, առաջնակարգ փորձառու օրթոպեդ, դոկտոր-պրոֆեսոր Վ. Կիրակոսյանը:

6.18.2019 թ. մայիսի 15-ին ԱԲՀ Գիտական մասը կազմակերպել էր գիտաուսումնական սեմինար համալսարանի ուսանողների համար:

6.19.2019թ. մայիսի 24-ին Համալսարանը հյուրընկալեց Իրանի փոխդեսպան հյուպատոս Մոխթար Շահ Հոսեինիին: Այցի նպատակն էր՝ ծանոթանալու համալսարանի հետ, նրա առաքելությանը, համալսարանի պայմաններին, կրթական միջավայրին: Հարգարժան հյուպատոսը այդ ամենի շրջանակներում առանձին հանդիպում ունեցավ համալսարանի ղեկավարության հետ, ապա առանձին կազմակերպվեց հյուպատոսի հանդիպումը համալսարանում սովորող իրանցի ուսանողների հետ, որոնց հետ մոտ մեկ ժամ տևած զրույցն ընթացավ բաց, անկաշկանդ մթնոլորտում:

6.20.2019թ. մայիսի 24-ին համալսարանում յուրահատուկ եռուզեռ էր: Ուսանողներից շատերը համալսարան էին եկել իրենց ազգային վառ տարազներով, ուսանողները նշեցին համալսարանի ավանդական տարեվերջյան միջոցառումը, որի կարգախոսն էր՝ «Սիրում եմ քեզ, հայոց լեզու»:

7. Ամփոփում:

Համեմատելով նախորդ տարիների հետ, կարող ենք փաստել, որ զգալիորեն ընդլայնվել է օտարերկրյա ուսանողների թիվն ու աշխարհագրությունը: 2018-2019 ուսումնական տարվա համար Ավանդական բժշկության համալսարան են դիմել շուրջ 158 դիմորդներ ավելի քան 15 երկրներից՝ բոլոր աշխարհամասերից:

29.09.2018թ. դրությամբ 237 ուսանողներից 47-ը՝ ՀՀ քաղաքացիներ են, 195-ը՝ օտարերկրյա ուսանողներ, այլ բուհերից տեղափոխված՝ 6 ուսանող:

Ներկայացնենք ստորև ուսանողների քանակը 2018-2019 ուստարվա սկզբին ըստ երկրների.

1. Հնդկաստան- 89
2. Իրաք – 66

3. Իրան -10
4. Մեծ Բրիտանիա – 19
5. Ավստրիա 1
6. Իռլանդիա 2
7. Գերմանիա 1
8. Շվեդիա 1
9. Շրի Լանկա 1
10. Սիրիա 1
11. Պորտուգալիա 1
12. Բրազիլիա – 2
13. Նեպալ – 1

Եվ ներկայացնենք 2018-2019 ուստարվա ուսումնական պլանները կատարած, ստուգարքներն ու քննությունները հանձնած անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների II, III, IV, V կուրս փոխադրված ուսանողների քանակը ըստ երկրների.

1. Հնդկաստան- 85
2. Իրաք – 55
3. Իրան -9
4. Մեծ Բրիտանիա – 15
5. Իռլանդիա 2
6. Գերմանիա 1
7. Շվեդիա 1
8. Շրի Լանկա 1
9. Սիրիա 1

13.ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2018-2019 ուստարվա ընթացքում ուսումնամեթոդական հանձնաժողովը իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Վերանայվել և հաստատվել է հանձնաժողովի կազմը:
2. Վերանայել է ամբիոնների ուսումնական փաստաթղթերն՝ ըստ հաստատված ցանկի:

3. Ուսումնասիրվել է անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով մասնագիտությունների առարկայական դասընթացների ծրագրերը՝ համաձայն ուսումնական պլանների:
4. Անցկացվել են քննարկումներ և խորհրդակցություններ դասալսման արդյունքների, դասավանդման մեթոդների, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի համապատասխանության հարցերը:
5. Քննարկվել են ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերը:
6. Ուսումնասիրվել է ամբիոնների կողմից ուսումնական, մեթոդական և գործնական աշխատանքների համար նախատեսված անհրաժեշտ դասախոսությունները, ինքնուրույն հանձնարարությունների բովանդակությունը, մասնագիտական գրականության անհրաժեշտ քանակակազմը:
7. Ուսումնասիրվել է բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների ամբիոններում ուսումնամեթոդական աշխատանքների ու փաստաթղթերի վիճակը, արդյուքները զեկուցվել է համալսարանի գիտխորհրդի նիստում:
8. Ամբիոններում հաշվետու տարում ակտիվորեն շարունակվել են ուսումնամեթոդական նյութերը օտար լեզվով պատրաստելու աշխատանքները:

Մեթոդական աշխատանքներն ուղղված են եղել իրագործելու Բոլոնյան հռչակագրի պահանջները և բնականաբար, կրթության որակի բարձրացմանը:

.

14. ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԲՈՒԿ-ի բժշկական օգնության և սպասարկման տեսակներ

1. բժշկական ընդհանուր պրակտիկա,
2. ստոմատոլոգիական,
3. ատամնատեխնիկական,
4. ռեֆլեքսոթերապևտիկ:

Աշխատողների ընդհանուր քանակը՝ 17-ն է:

Բժիշկներ՝ 13, որից.

- Հոմեոպաթ - 1,
- Ներզատաբան - 1,
- ռեֆլեքսոթերապևտներ - 4,

- սրտաբան- 1
- գաստրոէնտերոլոգ-1
- ստոմատոլոգ - 5:

Միջին բուժանձնակազմ - 4, որից.

Բուժքույր - 2,

Սանիտարուհի - 1,

Ատամնատեխնիկ - 1:

Կենտրոնում իրականացվել է ըստ մասնագիտությունների պրակտիկ ուսումնական գործընթաց և բուժսպասարկում, բացի դրանից նաև գիտական աշխատանքներ ավանդական բժշկության բնագավառում:

- Բարձրացվել է ամբիոնի աշխատակիցների գիտական մակարդակը սեմինար պարապմունքների միջոցով: Զեկուցումներով հանդես են գալիս ամբիոնի աշխատակիցները: Կատարվել է թեմայի քննարկում: Սեմինարն ամփոփվել է ավանդական բժշկության ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի միջոցով:
- Կատարվել է հիվանդների վերլուծություն ուսանողների մասնակցությամբ, մշակվում է բուժման պլան և ինտեգրատիվ բուժում:
- Անց է կացվել բուժական պրոցեդուրաներ, ծանոթացվել է կատարման տեխնիկային և անվտանգության կանոններին:
- Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության ամբիոնում կատարվել է ասեղ-այրում թերապիան՝

1. ասեղնաբուժություն
2. այրում թերապիա
3. բազմասեղային ներգործություն
4. բուժական մերսում
5. ակոպունկտուրա
6. ասեղ-այրում թերապիան զուգորդվում է ֆիտոթերապիայի և ֆարմակո-թերապիայի հետ:

2018թ. «Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնում բուժման կուրս անցել են թվով 200 հիվանդ, իսկ ստոմատոլոգիական կաբինետում՝ 163:

Ստոմատոլոգիական բաժանմունքում բացի հիվանդների սպասարկումից, անցկացվել են ուսումնական գործնական պարապմունքներ և ուսումնաարտադրական

պրակտիկաներ, որոնց ընթացքում ուսանողները ուսումնասիրել են ներքոհիշյալ թեմաներ և ձեռք բերել հմտություններ ու կարողություններ:

II կուրս – Ստոմ. կաբինետի կահավորում, գործիքներ, հետազոտման մեթոդներ:

Դեոնտոլոգիան և էրգոնոմիկան ստոմատոլոգիայում:

Հիվանդության պատմագրի լրացում:

Բերանի խոռոչի լորձաթաղանթի կառուցվածքը: Մշտական կաթնատամներ, ծկթման ժամկետները: Էմալ, դենտին, ցեմենտ: Պլոմբանյութեր:

III կուրս - Կարիես՝ էթիոպաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբ. ախտորոշումը: Բուժումը:

Ոչ կարիեսային ախտահարումներ՝ էթիոպաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբ. ախտորոշումը: Բուժումը

IV կուրս – Պուլպայի անատոմիան, ֆիզիոլոգիան, առանձ և ֆունկցիաները: Պուլպիտների դասակարգումը, էթիոլոգիան, կլինիկան, պաթոգենեզը, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:

V կուրս – Պերիգդոնտի անատոմիան, ֆիզիոլոգիան, առանձ և ֆունկցիաները: Պերիգդոնտների դասակարգումը, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:

Պարոդոնտի կառուցվածքը, հիվանդությունների դասակարգումը: Գինգիվիտ, պարգդոնտիտ, պարգդոնտոզ, պարգդոնտի իդիոպատիկ ախտահարումներ, ուռուցքանման գոյացություն և ուռուցքներ՝ էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, տարբ. ախտորոշում, բուժումը:

Բերանի խոռոչի լորձաթաղանթի կառուցվածքը, անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդությունների դասակարգումը: Լեզվաբորբեր: Շրթնաբորբեր:

15.ԳՐԱԴԱՐԱՆ

Այս ուսումնական տարում շարունակվել են ԱԲՀ գրադարանի գրքային ֆոնդերի, ինչպես նաև Էլեկտրոնային գրքերի շտեմարանի համալրման աշխատանքները:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս նոր գրքերը կոմպլեկտավորվել են, կատարվել է գրքերի գրանցում համապատասխան գրքամատյաններում: Նոր գրականությունը գրանցելուց և մշակելուց հետո տեղադրվել է գրապահոցի համապատասխան բաժիններում: Էլեկտրոնային գրքերը նույնպես տեղակայվել են առարկայի համար

ստեղծված համապատասխան թղթապանակներում: Հարկ եմ համարում նշել, որ գրադարանում առկա է 1005 միավոր էլեկտրոնային գիրք:

Ավարտվել են համակարգչում գրադարանի ամբողջ գրքային ֆոնդի մուտքագրման աշխատանքները: Շարունակվում են համակարգիչ մուտքագրվել և պարբերաբար թարմացվել դասախոսների կողմից տրամադրված էլեկտրոնային դասախոսությունները:

Պարբերաբար բնույթ են կրում գրքային ֆոնդում առկա արտաքնապես ոչ հուսալի վիճակում հայտնված գրքերի վերամշակման աշխատանքները:

Համակարգչային սրահն իր ինտերնետային համացանցով շարունակում է անխափան աշխատանքը: Համալսարանի համակարգչային սրահից և ընթերցասրահից օգտվելու ուսանողների հաճախականությունը այս ուսումնական տարվա ընթացքում էականորեն աճել է, ինչը դրական և կարևոր գործոն է ուսումնառության առումով: ԱԲՀ գրադարանը 2018-2019 ուս. տարում ևս համագործակցել է «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ի հետ, որին ներկայացրել է գրադարանային տարեկան հաշվետվություն: Համագործակցության շրջանակներում մասնակցել եմ աշխարհի առաջադեմ գրադարանների մասին պատմող տեսաֆիլմի ներկայացմանը:

Գրադարանը լիովին կատարել է իր առաքելությունը, այն է՝ նպաստել ուսումնական գործընթացին՝ ապահովելով տեղեկատվության մատչելիություն և ժամանակակից ծառայություններ, ինչպես նաև համալրել և ընթերցողներին տրամադրել բժշկության ոլորտի թե՛ տպագիր, և թե՛ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանները:

16.ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Տնտեսական մասը, համաձայն իր 2018-2019 ուստարավա աշխատանքային պլանի, աշխատակիցների հետ քննարկել է աշխատանքային գործունեության հիմնական խնդիրները և դրանց լուծման եղանակները:

Ներհամալսարանական տնտեսությունը կազմակերպելիս օգտագործվել է տնտեսական մասի աշխատակիցների ներուժը: Հստակեցվել են տնտեսական աշխատակազմի գործառույթները, կարևորվել է տնտեսական մասի աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը, դրանց նկատմամբ իրականացվել են պարբերական ստուգումներ, գնահատումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

2018-19թ.թ. ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպման համար հատկացված ֆինանսական ռեսուրսներով ձեռք են բերվել

- գրենական պիտոյքներ – 440 700 դրամ
- մատյաններ, ուսանողական տոմսեր և գրքույկներ – 202 600 դրամ
- լաբորատոր փորձերի առնետներ -11 000 դրամ

- Լսարանները տեխնիկապես հագեցնելու և կահավորելու համար ձեռք է բերվել
  - համակարգիչներ - 1 938 000 դրամ
  - հեռուստացույցներ – 870 000 դրամ
  - ուսանողական սեղաններ և աթոռներ– 821 000 դրամ
- Համալսարանում անվտանգության համակարգի տեղադրման համար ձեռք են բերվել տեսախցիկներ – 268 600 դրամ
- Համալսարանը ինտերնետային կայքում և տեղեկատույում գովազդելու համար տրամադրվել է 190 000 դրամ
- Համալասարանի սանհանգոյցների կահավորման պարագաների համար հատկացվել է 39 000 դրամ
- Համալսարանի համակարգչային ցանցի սպասարկման համար ծախսվել է - 218 000 դրամ
- Թափուր աշխատատեղերի հայտարարությունների ինտերնետային կայք - էջի համար հատկացվել է 20 000 դրամ
- 2018-19թ.թ. ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպման համար հատկացված ֆինանսական ռեսուրսներով ձեռք են բերվել
  - գրենական պիտոյքներ – 440 700 դրամ
  - մատյաններ, ուսանողական տոմսեր և գրքույկներ – 202 600 դրամ
  - լաբորատոր փորձերի առնետներ - 11 000 դրամ
- Լսարանները տեխնիկապես հագեցնելու և կահավորելու համար ձեռք է բերվել
  - համակարգիչներ - 1 938 000 դրամ
  - հեռուստացույցներ – 870 000 դրամ
  - ուսանողական սեղաններ և աթոռներ– 821 000 դրամ
- Համալսարանում անվտանգության համակարգի տեղադրման համար ձեռք են բերվել տեսախցիկներ – 268 600 դրամ
- Համալսարանը ինտերնետային կայքում և տեղեկատույում գովազդելու համար տրամադրվել է 190 000 դրամ

- Համալասարանի սանհանգոյցների կահավորման պարագաների համար հատկացվել է 39 000 դրամ
- Համալսարանի համակարգչային ցանցի սպասարկման համար ծախսվել է - 218 000 դրամ
- Թափուր աշխատատեղերի հայտարարությունների ինտերնետային կայք-էջի համար հատկացվել է 20 000 դրամ

Ուսումնական գործընթացի ապահովման նպատակով տպագրվել են փոքր և մեծ մատյաններ, ուսանողական տոմսեր և ստուգման գրքույկներ:

Համալսարանի բոլոր հարկերում տեղադրված են և գործում են անվտանգության տեսախցիկներ: